ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

2011թ. հունիսի 7-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգում

1. **2010/2011 ուստարվա պետական քննական հանձնաժողովի նախագահների հաշվետվություն:**
2. **2010/2011 ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտական քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում: /Զեկ. Ա.Գրիգորյան/**
3. **Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում: /Զեկ. Ա.Գրիգորյան/**
4. **Ընթացիկ հարցեր:**

1. ԼՍԵՑԻՆ - 2010/2011 ուս. տարվա պետական քննական հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները /զեկուցումները կցվում են/: Պետական քննական հանձնաժողովի նախագահների գնահատականը լրիվ արտացոլում է ավարտական հաշվետվությունների, մագիստրոսական թեզերի և պետական քննությունների իրական պատկերը ֆակուլտետում: Ելույթ ունեցողները նշեցին, որ մագիստրոսական թեզերի և ավարտական հաշվետվությունների թեմաները պետք է լինեն խիստ ժամանակակից և ներկայացվեն պատշաճ մակարդակով:

Ելույթ ունեցան Ա.Ավագյանը, դեկան Մ.Գրիգորյանը՝ նշելով այն թերությունները, որոնք դիտվեցին պետական ավարտական քննությունների ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Պետական քննական հանձնաժողովների նախագահների ելույթը ընդունել ի գիտություն և հաստատել նրանց զեկուցումները:

2. Ավարտական քննությունների և մագիստրոսական թեզերի թեմաները ցանկալի է որ լինեն ժամանակակից և ներառեն արտադրական հիմնարկների թարմ տվյալների բազան:

Որոշումն անցավ միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - Ա.Գրիգորյանի ելույթը 2010/2011 ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտական ընթացիկ քննությունների կազմակերպման վերաբերյալ: Նշվեց, որ նախորոք կազմվել են ստուգարքների և քննությունների գրաֆիկները, սահմանվել է հերթապահություն: Քննությունների արդյունքները կամփոփվեն խորհրդի հաջորդ նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա.Գրիգորյանի ելույթը ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ - Ա.Գրիգորյանի ելույթը ֆակուլտետում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց այդ պրակտիկաների գրաֆիկները, երթուղիները , հաստատված ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ա.Գրիգորյանի ելույթը ընդունել ի գիտություն:

2. Նախորոք կազմել ուսումանական պրակտիկաների հաշվետվությունների ներկայացման գրաֆիկները:

3. Մարմարիկի ուսումնական բազայում ուսումնական պրակտիկայի ընդհանուր ղեկավար նշանակել դոցենտ Ա.Ս.Սարդարյանին:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ա/ ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանի հաղորդումը սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. դոկտոր Մաքսիմ Գառնիկի Մանասյանին պրոֆեսորի կոչում շնորհելու վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ Մ.Մանասյանի կողմից ներկայացված են ՀՀ ԲՈՀ-ի կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կա նաև ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի, ինչպես նաև ամբիոնի դրական կարծիքը՝ Մ.Մանասյանին պրոֆեսորի կոչում շնորհելու վերաբերյալ:

Ելույթ ունեցան - Ա.Ավագյանը, Ա.Սարդարյանը, Մ.Գրիգորյանը, նշելով Մաքսիմ Մանասյանի ֆակուլտետում ունեցած գիտամանկավարժական գործունեությունը և առաջարկեցին այդ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

Առաջարկվեց փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ – Ռ.Մովսեսյան, գիտ. թեկնածու, դոցենտ
Անդամներ – Թ.Վարդանյան, Շ.Խաչատրյան:

Լսեցին փակ գաղտնի քվեարկության հանձնաժողովի նախագահ Ռ.Մովսիսյանի ելույթը քվեարկության արդյունքների վերաբերյալ, ըստ որի խորհրդի 26 անդամներից քվերակությանը մասնակցել են 24-ը, բաժանվել է 24 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքները հետևյալն են

Մ.Գ.Մանասյան – կողմ՝ 18, դեմ՝ 2, անվավեր՝ 4:

Լսեցին խորհրդի նախագահ Մ.Գրիգորյանի առաջարկը փակ գաղտնի քվեարկության արդյունքները հաստատելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները և Մաքսիմ Գառնիկի Մանասյանին շնորհել սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆեսորի կոչում:

բ/ ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանի հաղորդումը ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի ասիստենտ, աշխ. գիտ. թեկնածու Կամո Բորիսի Ալեքսանյանին դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ Կ.Ալեքսանյանի կողմից ներկայացված են ՀՀ ԲՈՀ-ի կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կա նաև ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի, ինչպես նաև ամբիոնի դրական կարծիքը՝ Կ.Ալեքսանյանին դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ:

Ելույթ ունեցան – Թ.Վարդանյանը, Ա.Սարդարյանը, նշելով Կ.Ալեքսանյանի ֆակուլտետում ունեցած գիտամանկավարժական գործունեությունը, առաջարկեցին այդ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

Առաջարկվեց փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ – Ռ.Մովսիսյան, գիտ. թեկնածու, դոցենտ

Անդամներ – Թ.Վարդանյան, Շ.Խաչատրյան:

Լսեցին փակ գաղտնի քվեարկության հանձնաժողովի նախագահ Ռ.Մովսիսյանի ելույթը քվեարկության արդյունքների վերաբերյալ, ըստ որի խորհրդի 26 անդամներից քվերակությանը մասնակցել են 24-ը, բաժանվել է 24 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքները հետևյալն են

Կ.Ալեքսանյան – կողմ՝ 23, դեմ՝ 1, անվավեր՝ չկա:

Լսեցին խորհրդի նախագահ Մ.Գրիգորյանի առաջարկը փակ գաղտնի քվեարկության արդյունքները հաստատելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները և Կամո Բորիսի Ալեքսանյանին շնորհել ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտի կոչում:.

գ/ ԼՍԵՑԻՆ – Սեթոդ խորհրդի նախագահ Թ.Վարդանյանի հաղորդումը ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի դասախոս Ա.Հ.Աղինյանի «Էկոլոգիական ջրաերկրաբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության համար խորհրդի երաշխավորությունը ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա.Հ.Աղինյանի «Էկոլոգիական ջրաերկրաբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

դ/ ԼՍԵՑԻՆ – Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ Ս.Հայրոյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ս.Հ.Հայրոյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Ուռչող գրունտների ամրության և սողքի փոփոխության օրինաչափություններն ու կանխատեսումը, նրա կիրառման հնարավորությունները շինարարության մեջ (փորձարարահաշվարկային հետազոտություններ)» վերնագրով:

ե/ ԼՍԵՑԻՆ – Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ Ս.Հայրոյանի հաղորդումը ամբիոնի ասպիրանտ Օֆելյա Արշակի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Օ.Ա.Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արարատյան արտեզյան ավազանի ջրաերկրաբանական պայմանների ազդեցությունը հարթավայրի հողերի մելիորատիվ վիճակի վրա և նրանց բարելավման ուղիները» վերնագրով:

2. Գիտական ղեկավար նշանակել տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ Ժորա Առաքելի Աչոյանին:

զ/ ԼՍԵՑԻՆ – Սեթոդ խորհրդի նախագահ Թ.Վարդանյանի հաղորդումը Ա.Վ.Վարդանյանի «Քարոլորտային սալերի տեկտոնիկայի հիմնադրույթները» ուսումնական ձեռնարկի տպագրության համար խորհրդի երաշխավորությունը ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա.Վ.Վարդանյանի «Քարոլորտային սալերի տեկտոնիկայի հիմնադրույթները» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

է/ ԼՍԵՑԻՆ – Մեթոդ խորհրդի նախագահ Թ.Վարդանյանի հաղորդումը Մ.Խաչատրյանի «Հայ քարտեզագրության պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև XX դարը)» մենագրության տպագրության համար խորհրդի երաշխավորությունը ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մ.Խաչատրյանի «Հայ քարտեզագրության պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև XX դարը)» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ը/ ԼՍԵՑԻՆ – Սեթոդ խորհրդի նախագահ Թ.Վարդանյանի հաղորդումը Գ.Հ.Սուրենյանի, Ա.Վ.Խոյեցյանի «Մթնոլորտի շրջանառության դերը ՀՀ եղանակակլիմայական պայմանների ձևավորման գործում» մենագրության տպագրության համար խորհրդի երաշխավորությունը ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գ.Հ.Սուրենյանի, Ա.Վ.Խոյեցյանի «Մթնոլորտի շրջանառության դերը ՀՀ եղանակակլիմայական պայմանների ձևավորման գործում» մենագրությունը երաշխավորել տպագրության:

թ/ ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Լուսինե Ռազմիկի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Լ.Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Տարածքի ռեկրեացիոն ներուժի համալիր աշխարհագրական գնահատում: Կոտայքի մարզի օրինակով» վերնագրով:
2. Գիտական ղեկավար նշանակել աշխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանին:

ժ/ ԼՍԵՑԻՆ – Լիանա Էդիկի Վարդումյանի «Սյունիքի մարզի գետերի ջրերի ջրաքիմիական վերլուծություն և գնահատում» թեմայով ատենախոսության եզրակացությունը ԻԴ.04.01 թվանիշով «Երկրաբաբահանություն» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հացման նպատակով ԵՊՀ-ում գործող 005 թվանիշով մասնագիտական խորհուրդ՝ հրապարակային պաշտպանության ներկայացնելու համար:
Եզրակացությունը բերված է արձանագրության վերջում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել Լիանա Էդիկի Վարդումյանի ատենախոսությունը հրապարակային պաշտպանության համար:

ի/ ԼՍԵՑԻՆ – Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի ասպիրանտներ Մանուկ Եղիազարյանի, Սարգսի Քելյանի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Գոռ Ալեքսանյանի, երկրաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Ռոման Խաչատրյանի ատեստավորման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանուկ Եղիազարյանին, Սարգիս Քելյանին, Գոռ Ալեքսանյանին և Ռոման Խաչատրյանին ատեստավորել:

լ/ ԼՍԵՑԻՆ – Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Ս.Հայրոյանի հաղորդումը ամբիոնի ասպիրանտ Սարգիս Քելյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփոխության վերաբերյալ: Նա նշեց, որ Սարգիս Քելյանի ատենախոսության թեման եղել է «Դրենաժային համակարգերի հիմնախնդիրները Արարատյան հարթավայրի գերխոնավացած հողերի մելիորացիայի գործընթացում» և գիտական ղեկավար՝ Ժորա Առաքելի Աչոյանը: Այժմ առաջարկվում է գիտական ղեկավար նշանակել տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ Նվեր Լիպարիտի Մելիքյանին, իսկ ատենախոսության թեմա՝ «Հորիզոնական ցամաքուրդների կառավարումը և հիմնախնդիրները Արարատյան հարթավայրում» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սարգիս Քելյանի գիտական ղեկավար նշանակել տեխ.գիտ.դոկտ., դոցենտ Նվեր Լիպարիտի Մելիքյանին, իսկ ատենախոսության թեման հաստատել՝ «Հորիզոնական ցամաքուրդների կառավարումը և հիմնախնդիրները Արարատյան հարթավայրում» վերնագրով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Մ.ՍԱՐԴԱՐՅԱՆ